ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3048 - Ա **20 ապրիլի 2009թ.**

ԱՅԳԵՍՏԱՆ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 18/5 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՈՐԱ ՍԵՐՅՈԺԻ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ, ԲԱԳՐԱՏ ՌՈԲԵՐՏԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, ՇՈՒՇԱՆ ՌՈԲԵՐՏԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, ՍՐԲՈՒՀԻ ՌՈԲԵՐՏԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Նորա Սերյոժի Շահվերդյանի (ծնված 04.08.1938թ.), Բագրատ Ռոբերտի Մանուկյանի (ծնված 23.09.1962թ.), Շուշան Ռոբերտի Մանուկյանի (ծնված 15.03.1965թ.), Սրբուհի Ռոբերտի Մանուկյանի (ծնված 06.04.1969թ.) դիմումը: Ըստ քաղաքացու հայտարարության՝ Այգեստան 2-րդ փողոցի հ.18/5 հասցեում գույքային միավորի նկատմամբ գրանցված իրավունք առկա չէ:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1960 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման 04.12.2008թ. հ.9774ա, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 16.04.2009թ. հ.20/2-Ե/243 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 10.04.2009թ. հ.20-Ել-3171 եզրակացությունը, համաձայն որի Այգեստան 2-րդ փողոցի հ.18/5 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում:

Ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Այգեստան 2-րդ փողոցի հ.18/5 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Նորա Սերյոժի Շահվերդյանի, Բագրատ Ռոբերտի Մանուկյանի, Շուշան Ռոբերտի Մանուկյանի, Սրբուհի Ռոբերտի Մանուկյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 231.75քմ մակերեսով հողամասի չափով (որից 32.4քմ մակերեսով հողամասը ընդհանուր համատեղ բաժնային սեփականություն է Սվետլանա Աթանեսյանի հետ)՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 231.75քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով։

4. Այգեստան 2-րդ փողոցի հ.18 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Այգեստան 2-րդ փողոցի հ.18/5 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Նորա Սերյոժի Շահվերդյանի, Բագրատ Ռոբերտի Մանուկյանի, Շուշան Ռոբերտի Մանուկյանի, Սրբուհի Ռոբերտի Մանուկյանի սեփականության իրավունքն ամրագրված հողամասի և շենք-շինության նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Կենտրոն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ